

**Հ ա ղ ո ր դ ա գ լ ու թ ի ւ ն  
Բ ր օ է տ ի ւ գ ա ց ի օ**

**Մ Կ Հ'Ի Տագնապին Լուծանքը**

**(1) Ե ղ ե լ ու թ ի ւ ն**

**1.1 - ՄԿՀԻ (Մելքոնեան Կրթական Հաստատութեան) փակումին սահմանուած թուականն է Յունիս 2005. մատակարար վարչութեան, այսինքն՝ ՀԲՀՄԻ ՏԿԽին (Հայ Բարեգործական ընդհանուր միութեան Տնօրիններու կեղրոնական խորհուրդին) կողմէ : Այս տեղեկութիւնը հրատարակուած է 16.03.2004ին :**

**1.2 - ՄԿՀԻ փակումը առաջադրող որոշումին դէմ աշխարհատարած ընդիմութիւնը նոյնաժամանակ տարբեր խումբերու կողմէ յառաջ կը տարուի իրարու առընչուած չորս տեսակ գործողութիւններով :**

**Ա. ՀԲՀՄԻ ՏԿԽին մերձերցումներ, նպատակ ունենալով ապահովել ՄԿՀԻ գործունէութեան շարունակութիւնը անոր ներկայ տեղւոյն իր հողատարծքին վրայ, ի Նիկոսիա - Կիպրոս, ՀԲՀՄԻ վարչութեան տակ . բացայայտ եւ թափանցիկ կերպով :**

**Բ.. Զգուշացնելով աշխարհատարած հանուր հայկական հասարակութիւնը. անոր հաղորդելով պատշաճ գործունէութիւններու մանրամասնութիւններ, որոնք կը տարածուին զանազան լրասիրուներու միջոցաւ, ընդ որս սէյվմըգոնեանօրէ ([www.savemelkonian.org](http://www.savemelkonian.org)) եւ մելքոնեանֆօրէվըր.օրէ ([www.mekonianforever.org](http://www.mekonianforever.org)) կայքէջերը : Յիշատակելի է այս նիւթին ենթարկուած տեւական գրաքննութիւնը, որ կը կատարուի հայ կուսակցութեան մը մամուլին մեծամասնութեան կողմէ եւ որ զարմանալիօրէն ինքզինք կը ներկայացնէ որպէս «ռամկավար» եւ «ազատական» :**

**Գ. Կառավարական եւ քաղաքական միջամտութիւններ.**

**Գ.1 - Կիպրոսի Հանրապետութեան Կառավարութիւնը, որ ՄԿՀՆ կը համարէ ոչ միայն իրեւ Համահայկական Հաստատութիւն այլ նաեւ Կիպրոսի մշակութային ամբողջական հիւսկէնին մէկ մասը : Ան հրատարակած է իր Պաշտօնաթերթին մէջ թիւ 3829 - Ապրիլ 02.2004 ի Պահպանութեան Հրամանագիրը, առ ի պաշտպանութիւն ՄԿՀԻ հողատարածքին :**

**Գ.2 - Բրօ էտիւգացիօ Աշխարհատարած Միջազգային Խումբը, հիմնուելով Կարապետ Մելքոնեանի կտակին բովանդակութեան վրայ, դիմած է Կիպրոսի Կառավարութեան որ երկու բարեփոխութիւն մուծէ վերոյիշեալ Պահպանութեան Հրամանագրին մէջ. համաձայնելով Կտակին բովանդակութեան եւ Մարդկային իրաւանց, որոնք ի**

**միջի այլոց կը պաշտպանեն փոքրամասնութիւններու կրթութեան  
եւ մշակոյթի ազատութիւնները :** .../...

**Գ.3 - Մինչ այդ ՀԲԸՄի ՏԿին փորձեց կազմալուծել եւ ոչնչացնել ՄԿՀՆ. խնդրելով Կիպրոսի Հանրապետութեան Նախագահին, նաեւ գերիշխան այս երկրին պաշտօնատարներէն, յետո կոչել Պահպանութեան Հրամանգիրը, փաստաբանելով թէ ՄԿՀՆ ԱՄՆի (Ամերիկեան Միացեալ Նահանգներու) սեփականութիւն մըն է, քանի որ ՀԲԸՄի ՏԿին պաշտօնափայր ունի ԱՄՆի մէջ : Միջնորդութեան սոյն ճնշումներուն առընթեր, նոյն ՏԿին փորձած է իրեն աջակից ունենալ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը բնաջնջելու համար ՄԿՀՆ. առանց նկատի ունենալու այս անձնաւորութիւն-ներուն օրինական անպատշաճութիւնը սոյն խնդրոյն մէջ :**

**Դ. ՀԲԸՄի ՏԿին դէմ դատական դիմումներ պատրաստուած եւ կիրարկութեան մէջ են հիմ ունենալով Կարապետ Մելգոննեանի Կտակը, որ յստակօրէն կը սահմանէ ՀԲԸՄի դիրքը որպէս Հոգաբարձու վարիչ մը եւ ո՛չ թէ որպէս սեփանակատէր մը :**

## (2) - Ն պ ա տ ա կ

**ՄԿՀՆ բաց պահել, որպէս Արեւմտահայկական Գիշերօթիկ Բարձրագոյն Վարժարան մը Նիկոսիոյ իր Հողատարածքին վրայ. Հանուր Հայկական Հասարակութեան տղոց / մանչերու եւ աղջկանց համար, առանց նկատի ունենալու անոնց տնտեսական եւ ընկերային վիճակը :**

## (3) - Գ ո ր ծ ու ն է ու թ իւ ն

**3.1 - Նկատի ունենալով Կարապետ Մելգոննեանի Կտակին օրինական պատճէնը, որ Հրապարակաւ ծանօթ միակ պաշտօնական վաւերաթուղթն է ՄԿՀին առընչեալ, հարկ է որ Կիպրոսի Հանրապետութեան Դատական իշխանութիւնները պարզեն թէ ո՛վ է տէրը ՄԿՀին եւ Հողատարածքին որուն վրայ խարսխուած է ՄԿՀՆ վաղ 1920ական թուականին : Ըստ սահմանումի, Կիպրոսի Գերիշխան Հանրապետութիւնն է որ վերջնական իրաւարարն է իր հողերուն վրայ գտնուող կալուածներուն օրինական սեփականատիրութեան հարցերուն : (տես. մեր նամակները ուղուած Կիպրոսի Հանրապետութեան Նախագահին եւ այլ պաշտօնա-տարներուխ):**

**3.2 - Նկատի ունենալով որ ՄԿՀՆ իր տեսակին միակ վարժարանն է Հանուր Հայկական Եւրոպայի Հասարակութեան համար . Կիպրոսի Հանրապետութեան Պատկան իշխանութեանց ուշադրութեան կը յանձնենք այն իրողութիւնը թէ ՄԿՀի փակուիլը պիտի զրկէ հայերը իրենց իսկ մշակոյթին մէջ կրթուելու կարիլիութենէն, ուստի պիտի բռնաբարէ անոնց Մարդկային իրաւունքը : Բոլոր անհրաժեշտ օրինական քայլերը պիտի առնուին որպէսզի այս իրաւունքն ըլլայ գերակշիռ :**

(4) Զ գ ո յ շ

Ինչպէս նախորդ առիթներով ըստ ենք, կը կրկնենք, թէ ՀԲՀՄը կը պատկանի Համայն Հայկական Հասարակութեան եւ ո՛չ իր ՏԿԽին : Ճիշդ այնպէս ինչպէս Ամէնայն Հայոց Կաթողիկոսութիւնն ի Սուրբ Էջմիածին չի պատկանիր Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Վեհափառ Կաթողիկոսին, կամ Հայաստանի Հանրապետութեան էութիւնը չի պատկանիր անոր Նախագահին : Այս անհատները կամ անհատներու խումբերը բարոյապէս եւ օրինապէս չեն արտօնուած միայն ըստ իրենց ցանկութեան գործելու : Իրենց պարտականութիւնն է տնօրինել / վարել այն ինչ որ վստահուած է իրենց՝ որոշ կանոններով եւ օրէնքով. մինչ անոնք պարտին սահմանաւորել զիրենք միայն իրենց վստահուած պարտականութիւններով :

Հաճեցէք նկատի ունենալ, որ գեռ կան մարդիկ՝ մեզ նման, որոնց համար հարց չէ թէ ո՛վ է տնօրինողը / վարողը. այլ հարց է թէ պարտականութիւն մը ինչպէս կը կատարուի : Ուստի, մինչ կը մնանք յարգալիր՝ հանդէպ հաստատութեանց եւ անոնց առընչեալ անձերուն. բայց անոնցմէ կը պահանջենք որ ըլլան անոնք յարգալիր եւ ի դէմ հաշուետու իրենց պաշտօններուն եւ պարտականութեանց :

Մեր ներկայ գործունէութիւնը շարունակութիւնն է նախապէս մեր ձեռնարկածներուն, որոնք անցեալ վերջին երկու տարիներու ընթացքին յատկացուեցան ՄԿՀՆ փրկելու : Ինչպէս այլ խումբեր, կը ջանան իրազործել նոյն աշխատութիւնը տարբեր միջոցներով եւ ուղիներով :

Այսու ամենայնիւ՝ ՄԿՀՆ քանդելու հետամտող ՀԲՀՄի ՏԿԽին նախա-ձեռնութիւնները կրնան Հաստատութեան կրթական գործունէութիւններու ընդհատումին պատճառ ըլլալ: Մեր հայեացքով՝ վարժարաններու ընդհանուր պատմութեան մէջ նման ընդհատումներ, թէեւ անբաղ-ձալի, սակայն մահացու չեն :

Յանձնառու ենք փոքրացնել սոյն ընդհատումը եւ վերականգնել ՄԿՀՆ իր կրթական առաքելութեան մէջ. իր հողատարածքին վրայ ի նիկոսիա :

*յանուն Բրօ Էտիւգացիօ՚ի\**

(տես անուանացանկը՝ անգլիէրէնով տրուած նոյն Հաղորդագրութեան տակ)

[proeducatio@aol.com](mailto:proeducatio@aol.com)

Բարիկ 30.05.2005

Հեռապատճէն՝ +33 1 42 24 46 39

On behalf of PRO EDV CATIO\*

Dr. Renata Andréassian Psychologist (France), Tatiana Ferahian Member of EKATE (Cyprus), Sabine Haas Gamma Institutes Presidential Assistant.(Germany), Koharig Kevorkian Teacher in British School system, and multilingual Secretary for International business - retired (France), Dr Dalita a Roger-Hacian Professor of English

Literature at Paris Sorbonne (France), Saritha Sherstha International Secretary for Public Relations(Nepal).

Dr. Bernard Andreassian Professer of Surgery (Fance), John Arrowsmith Journalist – Textproducer BBC World Service (UK), Hagop Arzoumanian Businessman (Argentina), Dr. Edward Barsoumian–Head of Molecular & Cellular Biology Dep. (Japan), Thierry Cornavin Legal adviser and Faculty member at the Law University of Paris-Sorbonne (France), Xavier Coron Legal Adviser (France), Souren Gorzounian International Businessman, Member of AGBU (France), Edward A. Fisher Economist, CTA of Gamma World Network, specialist for International Systems of Education (UK), Karen Karapetyan PhD International Politics (UK), Kevork Kevorkian Electronics & Telecommunication Engineer- retired (France), Dr. Art Maranci Mat. Tec. Engineer - retired (USA), Dr Claude Armen Moutafian Faculty Member of Paris Universities, specialist of the Armenian International Relations' History (France), Dr Garbis Meguerian Chemical Engineer at Amaco – retired (USA) Philippe Mermod Electronics & Telecommunication Engineer, Professor of Telecommunication - retired (Switzerland), Haig Nazarian IT Engineer, Manager at British Council (Armenia), Dr Nicholas Nicolaidis President of Gamma Institutes, Public Administration specialist for long term planning (Greece), Dr. Vartan Ozinian President of Gamma Institutes World Network Mat. Sc. R&D Engineer and Political Scientist, Economist (France), Souren Sarafyan Development Director at Mettoni Ltd. Computer telephony integration (UK).

**\*Բրո էտիւգացիօ՞ն աշխարհաստարած միջազգային ասպարէղ (Փօրում) մըն է,**  
**որ կը զբաղի կրթական հարցերով, ուր նկատի կ'առնուին մշակոյթի ընկերային,**  
**տնտեսական ու քաղաքական տարածքի չափանիշերը եւ առընթերաբար աշխար-**  
**հաքաղաքական իրողութիւններն ու առընչեալ մարտավարութիւններ մարդոյժի**  
**զարգացման ի խնդիր. օրինաւորութեան եւ օրինական պայմաններու ներքեւ :**  
**Բրո էտիւգացիօ՞ն կ ը թ ա ս է ը՝ ս սիմոքահայերէ եւ ոչ-հայերէ**  
**բաղկացած յանձնախումբ մըն է, որ կը զբաղի հայկական կրթական հարցերով :**